Դատավճիռներն արգելք չեն հայրենադարձման համար: Դատավարությունների նպատակներից մեկը քաղաքական վրեժխնդրությունն է, որպեսզի հետագայում կիրառվի արտաքին հարաբերություններում՝ ինքնորոշման իրավունքը մերժելու նպատակով: Սա վկայում է, որ գերիների հարցը քաղաքական է, իսկ դատավարությունները չունեն իրավական հիմք:

Կարդացեք՝ էջ 4

Նոյեմբերի 10-ին ռադ լիներ, 6 տարում երկիրը ոտքի կկանգներ, նոր բանակցողներ կգային, Ալիեւը ստիպված կլիներ մի քանի անգամ մտածել Արցախը հայաթափելու հրեշավոր ծրագիրն իրականացնելուց առաջ: Կհամարձակվե՞ր գնալ այդ քայլին, եթե նրա դեմ կանգնած լիներ ոչ այս պարտված, իր մաշկի ու աթոռի համար դողացող երեւույթը:

Կարդացեք՝ էջ 5

Ծնողները բանտում են՝ զրկված են ծնողական իրավունքներից: 5 երեխաներին սկզբում տեղափոխել են ՀՕՖ, իսկ 2025 թ. դեկտեմբերից նրանց հանձնել են խնամատար ընտանիքի՝ Արտաշատի Դիմիտրով գյուղում: Այդ ընտանիքում եւս երկու երեխա է մեծանում: Նրանք արդեն դպրոց են հաճախում, համապատասխան ծառայությունները հսկում են:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 13 (4148), 6 փետրվար, ուրբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

2015 թ. Սահմանադրությամբ, ԱԺ-ում պարտադիր է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայությունը: Ընտրական օրենսգրքում սահմանել են, որ «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկվում են ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին 4 ազգային փոքրամասնության ներկայացուցիչները»: Ընտրական ցուցակը, ըստ օրենքի, բաղկացած է 2 մասից, առաջինը մեծ ցուցակն է, որտեղ կարող է ընդգրկվել մինչեւ 300 թեկնածու, երկրորդը՝ ազգային փոքրամասնություններինը: Նույն կետն ասում է. «յուրաքանչյուր ազգային փոքրամասնությունից… երկրորդ մասում պետք է ընդգրկված լինի ոչ պակաս, քան 2 ներկայացուցիչ, եւ ոչ ավելի, քան 4 ներկայացուցիչ»: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ն այս անգամ էլ որոշել է եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանին տանել ԱԺ: Բաքոյանը ներկայում Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նախագահի պարտականություններն է կատարում եւ տարբեր աղմկահարույց թեմաներում ՔՊ-ականից առավել «կաթոլիկ է», եւ բնական է, որ այդ ծառայությունները գնահատվում են:



«Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր, ՀՀԿ-ական Հայկ Մամիջանյանը երեկ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիի հետ հանդիպման ժամանակ նրան է փոխանցել քաղբանտարկյալ Նարեկ Սամսոնյանի կնոջ նամակը, առաջարկելով նաեւ, որ ճիշտ կլինի՝ անձամբ հանդիպի բժիշկների հորդորով օրերս հացադուլը դադարեցրած Սամսոնյանի եւ մյուս քաղբանտարկյալների հետ՝ լսելու նրանց դիրքորոշումները: Սակայն հանձնակատարը ոչ միայն չի ընդունել առաջարկը, այլեւ չի շարունակել խոսակցությունը՝ ցուցաբերելով զրո հետաքրքրություն:

Մեր տեղեկություններով, օրեր առաջ ԱՄՆ-ից Հայաստան մեծ պատվիրակություն է ժամանել՝ հավանաբար, փոխնախագահ Վենսի այցը նախապատրաստելու: Նրանց «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում մի ամբողջ հարկաբաժին են հատկացրել՝ տասնյակ սենյակներ, որտեղ կահույքից թողել են միայն սեղան-աթոռներ, մնացածը դուրս են բերել: Հյուրանոցի աշխատակիցներին արգելված է այդ հարկում գտնվել: Պատվիրակության անդամների գիշերակացը հյուրանոցի մեկ այլ հատվածում են կազմակերպել: Նրանք եկել են 2 շաբաթով: Հիշեցնենք, որ Վենսը ժամանելու է փետրվարի 9-ին, հաջորդ օրը մեկնելու է Բաքու:

Կարո՞ղ ենք ենթադրել

Մենք, իհարկե, Բաքվի «արդարադատությունից» չնչին ակնկալիք չունեինք, եւ այս դատավճիռները, որոնք երեկ արձակվեցին Ադրբեջանի դատարանի կողմից, կանխատեսելի էին, ու այդ պատժաչափն էլ ոչինչ չի նշանակում, որովհետեւ ակնհայտ է՝ դատվում են հայրենիքին, Արցախին ծառայություններ մատուցած անմեղ մարդիկ, դատվում է հայ ժողովուրդը, սա դատավճիռ է ընդդեմ Հայաստանի Հանրապետության, եւ միայն չհայը կարող է սա ընդունելի համարել: Բայց այս ամենի մեջ մի բան է սարսափեցնում: Իբրեւ թե խաղաղության ճանապարհով գնացող Ալիեւն ու Նիկոլ Փաշինյանը ձեւացնում են, թե սա կապ չունի խաղաղության գործընթացի հետ: Բայց այն, որ Ալիեւը ձեւացնում է՝ նորմալ է, իսկ ինչո՞ւ է նման կերպ պահում իրեն, ոչ բարով՝ Հայաստանի ղեկավար կոչվողը: Ինչո՞ւ է նա դատավճիռների արձակման նախորդ օրը գնում Աբու Դաբի՝ հրճվալից դեմքով կանգնում հայասպան Ալիեւի կողքին, բռնում նրա ձեռքը, ինչ-որ մրցանակ ստանում, որը երկու «արյունակից եղբոր» նման համատեղ են ստանում: Իսկ կարո՞ղ ենք ենթադրել, որ այս դատավճիռները համաձայնեցված են եղել նրա հետ: Իսկ կարո՞ղ ենք ասել, որ Ալիեւի ձեռքը բռնողը, շնորհակալություն հայտնողը (հայտնողները) այս դատավճիռների եւ մեր հայազգի գործիչների խոշտանգումներին հավասարապես մասնակից են ու աջակցում են Ալիեւին, որ նրանց դատի ու պահի Բաքվում: Իսկ կարո՞ղ ենք ենթադրել, որ սա արվում է նաեւ այն նպատակով, որ Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ն վերարտադրվեն եւ իրական մրցակից չունենան, չէ՞ որ արցախցի գործիչները կարող էին նաեւ արժանի մրցակիցներ լինել: Իսկ կարո՞ղ են ոմանք ենթադրել, որ Հայաստանի ղեկին նստած մարդիկ ոչ միայն այս՝ հայազգի գործիչներին բանտում խոշտանգելու եւ ցմահ դատելու հարցում են համագործակցում մեր թշնամու հետ, այլ նաեւ՝ ուրիշ հարցերում:

Ընդդիմադիր ուժերը թեպետ չեն շտապում փակագծեր բացել, սակայն տեւական ժամանակ է՝ ակտիվ քաղաքական կոնսուլտացիաների մեջ են: Օրինակ, գրեթե կայացած է համարվում Գագիկ Ծառուկյանի եւ «Ապրելու երկիր» կուսակցության համագործակցությունը: Անգամ տեղեկություններ կան, որ ԱԵ համահիմնադիր Մանե Թանդիլյանն է լինելու ցուցակի առաջին կինը՝ զբաղեցնելով երրորդ հորիզոնականը: Ծառուկյանի «Առաջարկ Հայաստանին» միավորման մեջ, ըստ ամենայնի, կլինեն նաեւ Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստանի» ներկայացուցիչներ: Տեղեկություններ կան, որ հնարավոր է նաեւ Արման Թաթոյանի «Միասնության թեւերի» եւ «Հայաքվեի» հետ լինի համագործակցություն. ներկայում դեռ բանակցություններ են ընթանում: Իսկ եթե Արթուր Վանեցյանի «Հայրենիքն» էլ միանա այս ուժին, ապա քաղտեխնոլոգները կարծում են, որ շատ ուժեղ խաղացող է դաշտ մտնում: Ի դեպ, օրերս Գագիկ Ծառուկյանը հայտարարել էր, որ ինքը մեկի փոխարեն վարչապետի 3 թեկնածու ունի: Նրա կողքին են նաեւ քաղաքագետ Վահե Հովհաննիսյանը, մի խումբ դիվանագետներ, այդ թվում՝ նախկին արտգործնախարար Արա Այվազյանը:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

ՔՊ ցուցակում ընդգրկվելու հայտ ներկայացրած թեկնածուները, ինչպես հայտնի է, զրկված են ներկուսակցական քարոզարշավի հնարավորությունից: Այսինքն, թեկնածուներին արգելված է հանդիպել ընտրիչների հետ: Այնպես որ, առաջին փուլում պատվիրակներն ընտրություն են կատարելու՝ կուրորեն, այդպես էլ չճանաչելով թեկնածուներին, քանի որ կուսակցությունում կարծում են, որ անհավասար մրցակցային պայմաններ կլինեն՝ հայտնի կուսակցականներն առավելություն կստանան անհայտների նկատմամբ: Սակայն որոշել են երկրորդ փուլում քարոզարշավի հնարավորություն տալ: Այս փուլում, հիշեցնենք, պատվիրակներն ընտրելու են ցուցակի առաջին 50 համարին, բայց ցուցակում տեղաբաշխման հարցին, այդ թվում՝ վարչապետի թեկնածուի ընտրությանն անդրադառնալու են երկրորդ փուլում: Երկրորդ փուլում թեկնածուներին քարոզարշավի հնարավորություն կտրվի:

ԱԲՈՒ ԴԱԲԻ

Անախօրեին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ մեկնել էր Աբու Դաբի՝ մասնակցելու «Զայեդ» մարդկային եղբայրության 2026 թ. մրցանակաբաշխությանը:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահ Շեյխ Մուհամմադ բին Զայեդ Ալ Նահյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակի գլխավոր քարտուղար Մուհամմադ Աբդելսալամը, Եվրոպայի խորհրդի նախկին նախագահ եւ Բելգիայի նախկին վարչապետ Շառլ Միշելը, Սուրբ Աթոռի մշակույթի եւ կրթության դեպարտամենտի պրոֆեկտ Նորին սրբազանություն կարդինալ Ժոզե Տոլենտինո դե Մենդոսան եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

ՇԱՏ ՏԱՐՕՐԻՆԱԿ Է, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ ԵՆ ՏԱԼԻՍ, ԵՐԲ ԱՆԳԱՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՉԷ

Ինչպես արդեն հայտնի է, Փաշինյանն ու Ալիեւը «խաղաղություն» հաստատելու համար մեկնել են խաղաղության մրցանակը ստանալու, որը շնորհվել է Հայաստանի Հանրապետությանը եւ Ադրբեջանին:

Այդ մրցանակը ստանալուց ընդամենը 15 ժամ անց Բաքվի դատարանը հայ ռազմաքաղաքական ղեկավարության ճնշող մեծամասնությանը ցմահ ազատազրկման դատապարտեց, իսկ տարեց նախագահներին՝ Բակո Սահակյանին ու Արկադի Ղուկասյանին՝ 20 տարվա ազատազրկման:

Ադրբեջանագետ **Անժելա Էլիբեգովան**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Նախ, ուզում եմ ասել, որ շատ տարօրինակ է՝ տալ խաղաղության մրցանակ մի պայմանագրի շրջանակներում, որն անգամ ստորագրված չէ եւ, ըստ էության, դեռ գոյություն չունի: Այն ֆորմալ մրցանակ է, ուստի իրենից միայն մի բան է ներկայացնում՝ Նիկոլի քարոզարշավի սպասարկում, խաղաղության կեղծ օրակարգի պրոպագանդում, ավելի կոնկրետ՝ հերթական փուչիկ փիառն է, իսկ իրականում՝ խաղաղության մրցանակին զուգահեռ, այո, Բաքվում հայ ռազմագերիները ցմահ ազատազրկման են ենթարկվում, խոշտանգվում են, իսկ Ադրբեջանը շարունակում է ինտենսիվ զորավարժություններ անել, ռազմական բյուջեն է մեծացնում եւ ամեն գնով դառնում է միլիտարիզացված երկիր: Ասեմ ավելին՝ երեխաներին մանկահասակ տարիքից՝ մանկապարտեզից, պետական մակարդակով ռազմահայրենասիրական դասեր են տալիս, բարձրացնում են երեխաների ռազմահայրենասիրական ոգին, իսկ մենք՝ բոլորս գիտենք, թե դա ինչ է նշանակում: Կան տեսանյութեր, թե ինչ է կատարվում ադրբեջանական մանկապարտեզներում եւ ցածր դասարաններում: Նրանք պայքարում են թշնամու կերպարի դեմ՝ թիրախավորելով հայերին: Ադրբեջանը չի դադարում իր հայատյաց քաղաքականությունը, շարունակում է «Արեւմտյան Ադրբեջան» կոնցեպտը պաշտոնական մակարդակով առաջ տանել եւ բոլորովին չի ցանկանում խաղաղության մասին լսել: Էլ չենք խոսում այն օկուպացված տարածքների մասին, որոնցից դուրս գալու մտադրություն անգամ չունի: Այնպես որ, խաղաղության մրցանակը փուչիկ է, որը փորձում են վաճառել մեր հանրությանը՝ Նիկոլի քարոզարշավի ժամանակ: Իսկ իրականությունը սարսափելի է»:

Հարցին՝ ո՞ր պարագայում Բաքուն Հայաստանին կվերադարձնի հայ ռազմագերիներին, մեր զրուցակիցը պատասխանեց. «Ինչպես բազմիցս ենք լսել միջազգային գործընկերների կողմից՝ Հայաստանը պաշտոնապես հետաքրքրված չէ այդ հարցով եւ այդ հարցով չի ցանկանում զբաղվել: Առանց պետական մարմինների ինտենսիվ աշխատանքի՝ այն հնարավոր չէ: Պետք է երկրում լինի մի իշխանություն, որն այդ հարցով զբաղվելու ցանկություն կդրսեւորի»: Ինչո՞ւ խաղաղության ձգտող ադրբեջանցիները ՀՀ սուվերեն տարածքը չեն լքում: «Ադրբեջանն ասում է, որ այդ հարցը ոչ թե խաղաղության պայմանագրով պետք է որոշվի, այլ՝ դեմարկացիայի եւ դելիմիտացիայի շրջանակներում, իսկ այդ պրոցեսն ադրբեջանական կողմը չի ցանկանում կապել խաղաղության գործողությունների հետ: Ադրբեջանն ասում է՝ այդ պրոցեսը կարող է տեւել տասնամյակներ, ինչպես, օրինակ՝ Ադրբեջան-Վրաստան պրոցեսները, եւ ո՞վ ասաց, որ արդյունքում չի «պարզվի», որ այդ տարածքները բոլորովին էլ հայկական տարածքներ չեն, այլ ադրբեջանական են: Ադրբեջանն այս հարցում եւս որեւէ պատրաստակամություն չի դրսեւորում»,- ասաց մեր զրուցակիցը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Սոթքի հանքից գործադուլավորներին փոխարինողներ են բերել

Ախթալայից տեղեկացանք, որ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում 50 հանքափորների՝ մոտ 20 օր ընթացող գործադուլը դեռ շարունակվում է: Գործադուլավորները պահանջում են աշխատավարձի բարձրացում եւ աշխատանքային պայմանների բարելավում: Ախթալայից ասացին, որ վերջին 2-3 օրերին գործադուլավորների եւ կոմբինատի տնօրինության միջեւ բանակցություններ են ընթանում: Ֆաբրիկայի տնօրինությունը գործադուլավորներին փոխարինելու համար 20 հնդիկ էր բերել, որոնք, սակայն, հանքում չեն աշխատել, հեռացել են: Կոմբինատի ղեկավարությունը Սոթքի հանքի նախկին բանվորներին է բերել Ախթալա, որոնց մի մասն աշխատում է հանքում: Այժմ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում Սոթքից 7-8 բանվոր է աշխատում: Ախթալայի բնակիչ, Ալավերդու նախկին փոխքաղաքապետ Սասուն Վարդումյանը «Փաստինֆո»-ի հետ զրույցում նշել է, որ ինքը հանդիպել է կոմբինատի ղեկավարության հետ, իրեն ասել են, որ կոմբինատը տարբեր դժվարություններ ունի, այդ թվում՝ պոչամբար կառուցելու խնդիր, բայց պատրաստ են կատարել գործադուլավորների պահանջները, մասնավորապես՝ լրացուցիչ աշխատանքի դիմաց վարձատրություն սահմանել, եւ մի քանի ամիս ժամանակ են խնդրել: Վարդումյանը նաեւ շեշտել է, որ իշխանությունից եւ պատկան մարմիններից ոչ ոք այս ընթացքում չի հանդիպել գործադուլ անող հանքափորների հետ: Նրանք տրամադրված են վճռական՝ գնալ մինչեւ վերջ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՍԿԱՑԱՆՔ՝ ՔՊ-ԻՑ ԵՆ, ԲԱՅՑ ԴԱ ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱԼԻՍ, ՈՐ ԻՆՉ ՈՒԶԵՆ, ԱՆԵՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը գյուղի կենտրոնում պատրաստվում է ավազի հանքը շահագործել:

Ղուլունցի վաղեմի հակառակորդ, համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության անդամ **Մասիս Զեյնալյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում մանրամասնեց. «Մի քանի ամիս առաջ ավազահանք կար, որի հետ կապված՝ քրեական գործ կա հարուցված: ՊԵԿ-ը տուգանել է 63 միլիոն դրամով, ու, չգիտես ինչպես, էս վերջերս հանրային լսում են անում, զանգում եմ համայնքի ղեկավարի տեղակալին, հաստատում է՝ հանրային լսում եղել է, իրենք տեղյակ չեն, շրջակա միջավայրի նախարարությունն է արել: Զանգում եմ նախարարություն, ասում եմ՝ դուք տեղյա՞կ եք, ասում են՝ մենք տեղյակ ենք, որ ինչ-որ փորձաքննություն է գնում: Ասում եմ՝ իսկ դուք տեղյա՞կ եք, որ տվյալ տարածքը քրեական գործի մեջ է, ասում են՝ ո՞նց, ասում եմ՝ տենց: Հետո իրենք, չգիտես ինչպես, բանից անտեղյակ, հանրային լսում են անում: Նախ, առաջին վտանգն այն է, որ 22, 23, 24 փողոցները հայտնվում են սողանքի տակ՝ այդ հանքը շահագործելու դեպքում: Երկրորդ. շրջակա միջավայրի նախարարությունը, Երեւանում նստած, տեղյա՞կ է՝ այդ հանքը որտեղ է, ինչ վնաս կարող է հասցնել: Օդի աղտոտվածությունից են խոսում, դրա պատասխանատուն ո՞վ է: Մի անգամ էլ փորձ են արել՝ 4,7 հեկտար տարածքն աճուրդի հանել 331 հազար դրամով, կա ավագանու որոշում կամ քարտեզը: Մենք ո՛չ որպես բնակիչ, ո՛չ ավագանու անդամ տեղյակ չենք այդ հանրային լսումներից: Օրենքի շրջանակում, եթե դնում են հանրային լսում, պետք է ունենան ձայնագրություն, թող ցույց տան, ու մեկ էլ արձանագրություն՝ չգիտես ինչպես: Իրենց մնացել է մի քանի ամիս, վերջնականապես ուզում են այդ հանքն էլ առնեն»:

Հիշեցնենք, որ Տեղ համայնքն առաջիկայում խոշորացվելու է՝ միանալով Գորիսին:

Մասիս Զեյնալյանն ասաց, որ, իր տեղեկություններով, հանքի շահագործմամբ ուզում է զբաղվել կամ Դավիթ Ղուլունցը, կամ էլ նրա եղբայրը. «Իրենք դրել են բետոնի արտադրման գործարան՝ էլի գյուղի մեջ, շրջակա միջավայրի նախարարությունը ո՞նց է թույլատրել, այդ հողը կոպեկներով աճուրդի են դրել, ուրիշի անունով է: Չգիտես՝ սեփականատերը ոնց է դարձել համայնքի ղեկավար, որտեղ է լցվում այդ բետոնաջուրը: Տներից մի քանի մետր հեռու է, գյուղատնտեսական հողը դրել են աճուրդի՝ գյուղարտադրական նշանակությամբ, բայց դարձել է շինարտադրական, ու, չգիտես ոնց, իրենք են դարձել սեփականատերը: Վերջնականապես ուզում են հանքն էլ առնեն, պրծնեն: Հասկացանք՝ ՔՊ-ից են, բայց դա թույլ չի տալիս, որ ինչ ուզեն, անեն»:

Փորձեցինք մեկնաբանություն ստանալ **Դավիթ Ղուլունցից**: «Ես անկեղծ եմ ասում՝ մի ծաղիկը սարքել եք ծաղկի փունջ, խնդրում եմ՝ ինձ չանհանգստացնեք, հաջողություն, լավ մնացեք»,- կարճ պատասխանեց նա եւ անջատեց հեռախոսը:

Նշենք, որ Դավիթ Ղուլունցը պարբերաբար սկանդալներում է հայտնվում, վերջինն այն էր, որ 2024 թվականին ձերբակալվել էր զինծառայողների կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու պատճառով:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԵԽ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԵԼ Է ԼԱՐՎԱԾ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

ԱՐՄ

Երեկ խորհրդարանում թեժ հանդիպում է տեղի ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիի եւ հայաստանյան իշխող ու ընդդիմադիր որոշ պատգամավորների մասնակցությամբ: ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարն ամենամյա այց է կատարել Հայաստան, որին, ավանդույթի համաձայն, կհաջորդի հայտարարություն՝ Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ, կամ զեկույց:

Հանդիպման մանրամասներին տեղեկանալուց հետո կարելի է ենթադրել, որ Փաշինյանի արտաքին հովանավորները, ըստ ամենայնի, ծրագրել են հերթական անգամ նրան աջակցել՝ ընտրություններից առաջ պրոիշխանական հայտարարությամբ՝ բացահայտ աչք փակելով եւ թքած ունենալով Հայաստանում տիրող խայտառակ իրադարձությունների վրա: Օրինակ, այն փաստի, որ «մեր ձեւով հարցերը կլուծենք» արտահայտության համար մարդուն ամիսներով կալանավորում են եւ քրեական հետապնդման ենթարկում, խլում նրա բիզնեսը: Նաեւ՝ այն փաստի, որ, խախտելով սահմանադրական նորմը, բիրտ արշավ են իրականացնում Եկեղեցու եւ հոգեւոր դասի նկատմամբ, սրբազաններ են կալանավորում, լրագրողներ ու քաղաքական գործիչներ՝ ազատ խոսքի, իրենց քաղաքական հայացքների համար:

ԵԽ հանձնակատարի հետ հադիպմանը մասնակցել են ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչները՝ ՔՊ-ականներ Արուսյակ Ջուլհակյանն ու Վլադիմիր Վարդանյանը, ընդդիմությունից՝ Արմեն Ռուստամյանն ու Հայկ Մամիջանյանը: Ընդդիմադիրները եվրոպացի պաշտոնյային ներկայացրել են իրական պատկերը: Նրա օրակարգում երեք հարց է եղել՝ գենդերային հավասարությանը, կանանց նկատմամբ բռնությունների, իրավահավասարությանը, հանդուրժողականությանը եւ Լեռնային Ղարաբաղի փախստականների իրավունքներին վերաբերող, ընդ որում՝ ոչ վերադարձի իրավունքին, այլ՝ ինտեգրման ընթացքին:

Թե ինչու, ինչպես եւ ով է ընտրել այս օրակարգային հարցերը, մեր հարցին Արմեն Ռուստամյանը հանդիպումից հետո ասաց, որ չի կարող պատասխանել: Փոխարենը նշեց, որ իրենք հակադարձել են. «Ասացինք, որ՝ չէ, շատ լուրջ հարցեր կան Հայաստանում, որ ձեր օրակարգի մեջ չեն տեղավորվում, եւ սա առիթ է, որ մենք խոսենք այդ թեմաներով: Հիմնականում չորս թեմաների մասին ենք խոսել՝ քաղբանտարկյալներ, Եկեղեցու դեմ արշավ, գերիների հարց եւ, ընդհանրապես՝ Եվրախորհրդի մոտեցումները եւ մեր հարաբերությունները Եվրախորհրդի հետ: Քաղբանտարկյալների հետ կապված ես ասացի՝ ես այն անձանցից եմ եղել, որ ժամանակին եղել է «քաղբանտարկյալներ» տերմինի հինգ չափանիշները ձեւավորող հանձնաժողովի անդամ, եւ կարող եմ վստահաբար հայտարարել, որ այդ չափանիշներին համապատասխան տասնյակից ավելի քաղբանտարկյալներ ունենք, որ մարդիկ ոչ միայն խոսքի համար են այսօր դատապարտված կամ կալանավորված, այլեւ՝ ենթադրյալ մտքի: Օրինակ, դուք ինձ բացատրեք՝ ո՞նց կարելի է «մեր ձեւով» Եկեղեցին պաշտպանելը որպես տեռորիստական կամ ինչ-որ սահմանադրական կարգին դեմ կոչ դիտարկել»: Ապա հավելեց. «Մենք ասացինք, որ ամեն մի անձի հետ կապված թղթապանակ կա, կարող ենք ձեզ փոխանցել: Քաղաքական հետապնդումները պարզ երեւում են նաեւ նրանով, որ կալանքը դարձել է պատժի միջոց: Երկրորդը Եկեղեցու դեմ արշավն է, ես ասացի, որ դա ոչ միայն ՀՀ սահմանադրության դեմ է, նաեւ ՄԻԵԴ-ի մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափորոշիչների հետ կապված խնդիր է: Ըստ այդմ, շատ հստակ արձանագրվում է, որ ցանկացած միջամտություն Եկեղեցու ներքին ինքնավարությանը՝ ապօրինություն է: Պետությունն անջատ է Եկեղեցուց, եւ կրոնական համայնքներն ունեն իրենց ներքին ինքնավարությունը, եւ պետական որեւէ լիազորություն, այդ թվում՝ դատական լիազորություն, մտնել եւ այդ ինքնավարությունը խախտել՝ դա ուղղակի հակասում է ՄԻԵԴ-ի ձեւավորած նախադեպային փորձին»:

Խոսել են նաեւ Բաքվում գտնվող գերիների մասին. «Ասացի՝ շատ լավ է, որ 4 հոգու ազատեցին՝ 23-ից, բայց դա հենց խոսում է այն մասին, որ նրանք գերիներ էին, որ ազատեցին՝ ոչ թե տվել են, որ գան, իրենց պատիժը շարունակեն: Էդ փոխանակումները հենց խոսում են նրա մասին, որ դրանք գերի են, եւ սրանք շինծու դատավարություններ են, նպատակը՝ ազդել, ճնշել Հայաստանին, որ գնա նոր զիջումների: Վերջապես, ես անդրադարձա այդ հարցին, թե ինչպես է ձեզ մոտ ձեւավորվում միակողմանի կարծիք՝ Հայաստանում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Ինձ տրամաբանական, ադեկվատ պատասխան չտրվեց, թե ինչու չեղարկվեց համազեկուցողների այցը Հայաստան: Կարելի էր հետաձգել, բայց ո՞չ չեղարկել: Այսինքն, տպավորություն է, որ դուք պարզապես չեք ուզում լսել այլ կարծիք, ընդդիմադիր որեւէ այլ մոտեցում: Ասացի՝ հասկացանք, որ գոյություն ունի Եվրոպա-Ռուսաստան պատերազմ, եւ ասացի՝ հիմա, չգիտես ինչու, որտեղ որոշվել է, որ իշխանությունն այդ պատերազմում ճիշտ կողմում է, օպոզիցիան սխալ կողմում է, եւ այլեւս ունիվերսալ չեն առայժմ մարդու իրավունքների պաշտպանության հարցերը: Այսինքն, եթե մարդկանց դիտում են, իրենց թեթեւ ձեռքով, «Կրեմլի ագենտներ», ուրեմն նրանց իրավունքները կարելի է ոտնահարել: Սա պետք է վերացնել, սա նույն՝ Եվրոպայի խորհրդի հեղինակության հարցն է»,-ասաց Ռուստամյանը:

Իսկ ինչպիսի՞ն էր ԵԽ հանձնակատարի արձագանքը: «Հանձնակատարն ասաց՝ դուք ասացիք, մենք՝ լսեցինք»,- պատասխանեց Ռուստամյանը: Իշխանականները հնարավորություն չեն ունեցել հակադարձել ընդդիմադիրներին՝ ժամանակի սղության պատճառով, միայն ասել են, թե այդ ամենն ընդդիմության կարծիքն է:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Վերաքննություն-ատեստացիա՝ 2 եւ ավելի անգամ «կտրված» ուսուցիչների համար

Տավուշի մարզպետարանին հունվարի 29-ին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում քանի՞ ուսուցիչ է 2 եւ ավելի անգամ կամավոր ատեստավորումից բացասական արդյունք ունեցել, այդ ուսուցիչների դեմ ինչ միջոցներ են ձեռնարկվել, նրանք շարունակո՞ւմ են դասավանդել դպրոցներում»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Կամավոր ատեստավորումից 2 եւ ավելի անգամ բացասական արդյունք ստացած ուսուցիչները շարունակում են աշխատել, քանի որ 2026թ. գարնանը կկայանա կամավոր ատեստավորման գործընթաց, որին կմասնակցեն բացառապես վերոնշյալ ուսուցիչները»: Նկատենք, որ վերաքննություն-ատեստացիա անցկացնելով ատեստացիայից մի քանի անգամ ձախողված ուսուցիչների համար՝ ԿԳՄՍ նախարարությունն ակամա ընդունում է իր վրիպումը, որ ատեստավորման գործընթացը նախկինում սխալներով է անցկացրել, ուստի եւս մեկ հնարավորություն է տալիս ատեստացիայում 2 եւ ավելի անգամ ձախողված ուսուցիչներին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ի՞ՆՉ ԵՐԵՍՈՎ Է ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՏԱԼԻՍ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄ

2021 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, Նիկոլ Փաշինյանի ղեկավարած քաղաքական ուժը՝ «Քաղպայմանագիրը», նախընտրական ծրագիր էր ներկայացրել, որտեղ խոստանում էր արցախցիների՝ Արցախ վերադարձ, հայկական բանակի արդիականացում, դաշնակիցների՝ հատկապես Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորում, ՀԱՊԿ-ին ակտիվ անդամակցություն, Արցախի հանդեպ հոգածություն եւ անգամ ցեղասպանության ճանաչման քաղաքականության շարունակում: Այս հինգ տարվա ընթացքում Նիկոլ Փաշինյանն իր խոստումներից ոչ մեկը ոչ միայն չի կատարել, այլեւ արել է դրա ճիշտ հակառակը՝ հրաժարվել է Արցախի հարցից եւ արցախցիների իրավունքների պաշտպանությունից, հայտարարել է, որ սառեցնում է հարաբերությունները ՀԱՊԿ-ի հետ, եւ որ բանակը մեր անվտանգության երաշխավորը չէ, հրաժարվել է ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից եւ լուծարել է Մինսկի խումբը, նաեւ Հայաստանից տարածքներ է հանձնել Ադրբեջանին, արտաքին պարտքն է կրկնապատկել եւ այլն: Զավեշտալին այն է, որ իրենց նախընտրական ծրագրի ամբողջ ծավալով ձախողումը այս իշխանությունը բացատրում է աշխարհաքաղաքական փոփոխություններով եւ հայտարարում, որ իրենք ամենակարեւորն են արել՝ խաղաղություն են բերել հայ ժողովրդին:

Քաղաքագետ **Սերգեյ Շաքարյանցը** «Հրապարակի» հետ զրույցում տարակուսում է. «Բայց, ներողություն, այդ մարդը 2018 թվականին էլ է մեզ խոստումներ տվել, կատարվե՞լ է որեւէ մեկը: Օրինակ՝ կարմիր գծերը վերացրե՞ց Երեւանի փողոցներից՝ ոչ, արագաչափերի քանակը պակասե՞լ է, թե՞ շատացել, իհարկե՝ շատացել: Կամ, ասենք՝ սոցիալական արդարությունը վերականգնվե՞լ է՝ ոչ: Որեւէ քրեական գործ՝ մարտի 1-ի դեպքերով, բացահայտվե՞լ է, իհարկե՝ ոչ: 2016 թվականի քառօրյա պատերազմի հետ կապված բացահայտումներ եղե՞լ են՝ ոչ, 1999-ի ահաբեկչական ակտի հետ կապված տեղեկություններ ավելացե՞լ են՝ ոչ»:

Բայց Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ թալանը վերադարձրել է ժողովրդին՝ հատիկ առ հատիկ, մարտի 1-ն էլ թեպետ դատարանը չի կարողանում ապացուցել, ու դատարանն էլ արդարացրեց, սակայն ՔՊ-ականները վստահ են՝ Ռոբերտ Քոչարյանն է ամեն ինչի ետեւում կանգնած: «Բայց ակնհայտ է, որ ո՛չ Քոչարյանը, ո՛չ էլ Խաչատուրովը այդ ամենի հետ ոչ մի կապ չունեն: Իսկ ո՞վ է սպանել ոստիկաններին, ամբոխի վրա, ասում են՝ դիպուկահար է կրակել, իսկ ոստիկանների վրա ո՞վ կրակեց: Մոռացե՞լ են, որ մեկին բռնեցին, որը խոստովանել էր, որ այդ օրը իրեն բերել են փողով ու փողը չեն տվել: Ինչո՞ւ չեն ուզում քրքրել այդ գործը, մանգալ, նոր ինֆորմացիաներ գտնել, որովհետեւ գիտեն, թե ինչ է եղել իրականում: Կա՞մ մեկը, որ ուզում է բացահայտել, թե ահաբեկչական ակտի գիշերը պետության հետ կապ չունեցող մի խումբ անձինք ինչպես են հայտնվել պաշտպանության նախարարի աշխատասենյակում եւ նոր կառավարության կազմ հորինել: Ես զարմանում եմ մի բանի վրա՝ ի՞նչ երեսով է սա նոր խոստումներ տալիս ու նոր ընտրությունների գնում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԹԵ ՉՈՒՆԵՆԱՅԻՆՔ ՄԻՊ, ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԼԻՆԵՐ

ՄԻՊ

Փետրվարի 3-ին մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիին, շնորհակալություն է հայտնել Հայաստան կատարած այցի եւ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ բարձր մակարդակի համագործակցության համար:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մի շարք կարեւոր հարցեր, որոնք վերաբերում են կանանց իրավունքների պաշտպանությանը, Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման գործընթացին, բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, ատելության խոսքի եւ կրոնական ազատությունների հետ կապված խնդիրներին, «Հավասարության ապահովման եւ խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծին, իրավահավասարության եւ հակախտրականության ոլորտում առկա մարտահրավերներին եւ այլն:

Անահիտ Մանասյանը ներկայացրել է կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարին ուղղված քայլերը, խոսել է կրթական բարեփոխումների կարեւորության մասին, անդրադարձել է տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, խոսել է իր սիրելի թեմայից՝ ատելության խոսքի դեմ պայքարի մասին: «Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը շնորհակալություն է հայտնել Անահիտ Մանասյանին՝ ջերմ ընդունելության եւ իրականացված աշխատանքների արդյունքների համապարփակ ներկայացման համար՝ ընդգծելով մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման նպատակով երկխոսության եւ համագործակցության շարունակականության կարեւորությունը»:

Կարդալով այս հաղորդագրությունը՝ տպավորություն է ստեղծվում, թե խոսքը ոչ թե այսօրվա Հայաստանի մասին է, այլ, ասենք, օրինակ, այն մասին, որ Ֆլորիդայում կամ Բրյուսելում է աշխատում Անահիտ Մինասյանը, եւ մարդու իրավունքների համար պայքարն էլ եվրոպական բարեկեցիկ երկրում ընթացող պայքարի է նման: Ոչ մի խոսք քաղաքական բանտարկյալների մասին, ոչ մի խոսք Հայ առաքելական եկեղեցու դեմ փաշինյանական բացահայտ արշավի մասին, ոչ մի խոսք կալանավորված հոգեւորականների, եկեղեցի ներխուժած ԱԱԾ-ականների, Բաքվում խոշտանգվող մեր համաքաղաքացիների, ընդդիմության իրավունքների ոտնահարման մասին:

Իրավապաշտպան **Ռուբեն Մելիքյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատում է. «Ներկայիս մարդու իրավունքների պաշտպանին ես համարում եմ Հայաստանի պատմության վատագույն ՄԻՊ-ը: Եղել են ՄԻՊ-եր, որոնք, իհարկե, ոչինչ չեն արել, մեծ հաշվով, սակայն Անահիտ Մանասյանը ոչ թե ոչինչ չի անում, այլ վնաս է տալիս մարդու իրավունքներին, որովհետեւ եթե դու չես կարողանում տարանջատել առաջնահերթությունները, եթե կարեւորը երկրորդականից չես կարողանում տարբերել, ապա նշանակում է, որ այդ ինստիտուտին մեծ վնաս ես հասցնում: Բայց իրականում այստեղ խնդիրն ավելի շատ ոչ թե տարբերելու մեջ է, այլ՝ քաղաքական ուղղորդվածության: Այն ոճը, որով նա է աշխատում, ՄԻՊ ինստիտուտի վերաբերյալ բացասական վերաբերմունք է ստեղծում: Կան հիմնական հարցեր Հայաստանում, օրինակ՝ քաղբանտարկյալների հարցը, կան հարցեր՝ քաղաքական իրավունքների հետ կապված: Հենց այս հարցերի շնորհիվ է ձեւավորվել մարդու իրավունքների համակարգը, իսկ ՄԻՊ-ը փաստացի չի իրականացնում իր գործառույթները, ավելին՝ նա զբաղվում է երկրորդական հարցերով եւ անում է ամեն հնարավոր բան, որ բուն խնդիրները ստվերվեն: Քննիչի կողմից խոշտանգման մասին տեսանյութ տարածվեց, ես այդպես էլ չտեսա, որ ՄԻՊ-ը դրա վերաբերյալ հաղորդագրություն տարածեր: Դա, ի վերջո, կարեւորագույն հարց էր: Երկու տարի առաջ եղավ Սամվել Վարդանյանի խոշտանգման դեպքը: Մարդու իրավունքների մասին զեկույցում, որը բաղկացած էր հազար էջից, անդրադարձ չկար այդ դեպքի մասին: Եթե մենք չունենայինք ՄԻՊ, մեր երկրում մարդու իրավունքների վիճակն ավելի լավ կլիներ: Ինչու, որովհետեւ արեւմտյան կառույցները չէին բավարարվի ՄԻՊ-ի զեկույցներով եւ իրենք կզբաղվեին այս հարցերով ու վեր կհանեին իրական խնդիրները»:

Իսկ ինչ կարող է այս մասով անել ընդդիմությունը: Ինչո՞ւ են հայրենի ընդդիմադիրներն այսքան անկարող՝ ոչ ԵԽԽՎ-ի զեկույցների վրա են կարողանում որեւէ կերպ ազդել, ոչ միջազգային կառույցների հետ են կարողանում ճիշտ հաղորդակցվել, անգամ Հայաստան ժամանած եվրոպացի գործիչներին չեն կարողանում հստակ ու ամբողջական ինֆորմացիա տալ, որը կհերքի իշխանական կեղծ ինֆորմացիան. «Այդ հարցերով կարող է զբաղվել խորհրդարանական ընդդիմությունը, սակայն չգիտեմ, թե ինչ են կարողանում անել: Միեւնույն ժամանակ այս հարցում լայն հնարավորությունները նրանցն են: Օրեր առաջ մեր գործընկեր Արամ Վարդեւանյանն ԱՄՆ-ում փայլուն ելույթ ունեցավ՝ խղճի ազատության հետ կապված համաժողովի ժամանակ»:

ԲԱՔՎԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼ ՆՊԱՏԱԿ ԵՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Բաքվի ռազմական դատարանում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների եւ մյուս հայ բանտարկյալների դեմ շինծու մեղադրանքների գործով «դատավարությունը» մոտենում է ավարտին՝ արդեն ընթերցվում են հայ գերիների «դատավճիռները»:

Արցախի ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը եւ Արցախի ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը եւ Արցախի ՊԲ հրամանատրի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը ցմահ ազատազրկման են դատապարտվել, իսկ Բակո Սահակյանի եւ Արկադի Ղուկասյանի հանդեպ Բաքվի «հումանիստական» դատարանը 20 տարվա ազատազրկում է սահմանել՝ հաշվի առնելով նրանց տարիքը: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների ներկայացուցիչ, իրավապաշտպան **Սիրանուշ Սահակյանի** հետ:

- Նախորդ ամիս 4 հայ ռազմագերի հայրենադարձվեց, սակայն այսօր Բաքվի դատարանը նման դատավճիռներ է հրապարակել Արցախի ռազմաքաղաքական ներկայացուցիչների նկատմամբ: Նրանք՝ գրեթե բոլորը, դատապարտվել են ցմահ ազատազրկման՝ բացառությամբ երկուսի, որոնք էլ դատապարտվել են 20 տարվա ազատազրկման: Հաշվի առնելով, օրինակ, Վագիֆ Խաչատրյանի նախադեպը, կարո՞ղ ենք հույս ունենալ, որ մյուս ռազմագերիներն էլ, անկախ այդ կեղծ դատավճիռներից, մի օր կվերադառնան հայրենիք:

- Դատավճիռները լրիվ այլ խնդիրներ են լուծում, եւ այդ շինծու դատավարությունների նպատակը լրիվ այլ է: Դատավճիռները գործնականում արգելք չեն եղել՝ հայրենադարձման համար, երբ հայրենադարձման որոշումը հասունացել է տարբեր գործողությունների արդյունքում, Ադրբեջանը գերիներին ազատ է արձակել, անկախ այն բանից, թե ով որքան է ազատազրկվել Բաքվի դատարանում: Այսինքն՝ դատավճիռները որպես վահան չեն օգտագործում՝ հայրենադարձումը կանխելու նպատակով: Այո, մենք ունենք ակնառու օրինակներ՝ Վագիֆ Խաչատրյան, Վիգեն Էուլջեքջյան եւ այլն: Նախորդ ամսվա հայրենադարձված չորս ռազմագերիներն էլ Բաքվում երկարաժամկետ ազատազրկման էին դատապարտվել, սակայն պատիժն ամբողջապես չեն կրել: Եթե իրավական գործոնն այդտեղ կարեւոր լիներ, Ադրբեջանն առնվազն պետք է նախաձեռներ պատժի կրման նպատակներով պատիժը ՀՀ-ում շարունակելու պրոցես եւ պետք է լիներ հետեւողական, որ այդ անձինք Հայաստանում պատիժ կրեին: Բայց մենք տեսանք, որ իրավական գործընթաց չկա, եղել է պայմանավորվածություն, եւ դրա արդյունքում անձինք վերադարձվել են Հայաստան ու հայտնվել ազատության մեջ: Սա հավելյալ վկայություն է, որ գերիների հարցը քաղաքական է, իսկ դատավարությունները չունեն իրավական հիմքեր, դատավարությունների նպատակներից մեկը քաղաքական վրեժխնդրությունն է, որպեսզի հետագայում կիրառվի արտաքին հարաբերություններում՝ ինքնորոշման իրավունքը մերժելու նպատակով: Մյուս խնդիրը հայատյացություն գեներացնելն է, ինչն անթույլատրելի է եւ խաղաղության գործընթացին հակառակ է: Այս պատճառով մենք կարծում ենք, որ շինծու դատավարությունները համահունչ չեն խաղաղության գործընթացին, եւ ադրբեջանական կողմն օր առաջ պետք է ազատ արձակի բոլոր հայերին:

- Երեկ խաղաղության մրցանակ ստացան Ալիեւն ու Փաշինյանը: Ինչ եք կարծում՝ չկա՞ այստեղ հակասություն:

- Մրցանակները միջազգային համագործակցության համատեքստում են, մրցանակ տվողները հատուկ իրավական արժեքներ գնահատող, մարդու իրավունքները կարեւորող եւ քննարկող ատյաններ չեն, եւ այս ամենը պետք է տեսնել խորհրդանշական տեսանկյունից, այն կարող է ունենալ խրախուսող նշանակություն, ոչ միայն ամփոփեն խաղաղության ջանքերը, այլեւ՝ խրախուսեն, որպեսզի խաղաղության առաջընթաց արձանագրվի: Իմ գնահատմամբ՝ ապագայի տրամաբանությամբ պետք է քննարկենք եւ դիտարկենք մրցանակները: Դրանք խրախուսող են, դրանք օրինականացնում են եւ վերահաստատում այն կարեւոր քայլերը, որոնք ուղղվել են դեպի խաղաղություն, իսկ մրցանակներով խրախուսում են, որպեսզի ավելի կայուն եւ հաստատակամ քայլերով կողմերը մոտենան իրական խաղաղությանը, ինչու չէ՝ այստեղ կա նաեւ ֆորմալ նշանակություն, ինչը կապ չունի իրավական գործընթացների հետ:

- Ի՞նչ եք կարծում՝ առաջիկայում հնարավո՞ր է ռազմագերիների գոնե մի մասին հայրենադարձել: Ամիսներ անց խորհրդարանական ընտրություններ են, գուցե սա որեւէ ազդեցություն ունենա պրոցեսների վրա:

- Չենք բացառում հայրենադարձում ցանկացած պահի, քանի որ դրանք կապված են քաղաքական պայմանավորվածությունների եւ բանակցային պրոցեսների հետ: Ինչպես գիտենք՝ պլանավորված է նաեւ ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյայի այց: Ամերիկյան կողմը հատուկ հանձնառություն ունի, եւ ջանքերի ինտենսիվության արդյունքում կարող են հստակ արդյունքներ արձանագրել: Մենք նաեւ տեսնում ենք, որ տարբեր այլ երկրներից նույնպես Ադրբեջանին կոչեր են ուղղվում՝ գերիների ազատ արձակման վերաբերյալ, օրինակ՝ Ֆրանսիան նման կոչերով է հանդես գալիս: Ցանկացած պահի կարող են հայրենադարձումներ լինել, պրոցեսն անկանխատեսելի է, եւ կոնկրետ ժամկետներ ասելը դժվար է: Անգամ տեսանելի ժամկետներում դրանք կարող են ենթարկվել փոփոխության, քանի որ հարաբերությունները դինամիկ են, սակայն առաջիկայում չեմ բացառում, որ կլինեն հայրենադարձումներ:

ԳՈՒՔ

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Արդեն 10 օրից ավելի է՝ հանրությունը քննարկում է ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանի առանձնատան վաճառքի թեման: Հայրիկյանը սոցցանցերում գրում է այդ մասին՝ փորձելով ուշադրություն գրավել տան վրա, գնորդ գտնելու նպատակով: Նա իր առանձնատունը գնահատել է 3,2 միլիոն դոլար, բայց պատրաստ է վաճառել կես գնով՝ 1,6 դոլարով: Չնայած նման աննախադեպ զեղչին, գնորդ չկա. կամ Պարույր Հայրիկյանն է անիրատեսական գնահատում իր տունը, կամ գնորդները պատշաճ ուշադրություն չեն դարձնում դրան: Բայց էականը դա չէ:

Հայրիկյանն ասում է, որ տունը վաճառում է բարձրացած գույքահարկի պատճառով, եւ այդ գույքահարկը բարձրացվել է հատուկ իր համար. իշխանությունն իմացել է, որ այդ տանը բնակվում է Հայրիկյանը, եւ հատուկ այնպես է արել, որ այդ հատվածում գույքահարկը բարձրանա 500 անգամ, եթե նախկինում նա վճարում էր 7 հազար 900 դրամ, ապա անցած տարի՝ 3 միլիոն 900 հազար դրամ: Նման գումարը Հայրիկյանի համար այնպիսի ֆինանսական բեռ է, որը նա չի կարող կրել: Դժվար է ասել՝ Հայրիկյանն այդ տունը վաճառելով մտադիր է ավելի՞ էժան գույքահարկ ունեցող տուն գնել Հայաստանում, թե՞ մտադիր է տեղափոխվել Միացյալ Նահանգներ, որտեղ ապրում է նրա ընտանիքի անդամների մի մասը: Այնտեղ Հարիկյանի դեմ քաղաքական հետապնդում չեն իրականացնի, եւ գույքահարկը հատուկ նրա համար չեն բարձրացնի:

Ո՞րն է Հայրիկյանի ողբերգությունը. նա իր երիտասարդ տարիները նվիրել է Հայաստանի անկախացմանը, համենայնդեպս, իրեն այդպես է թվացել, նա հանուն իր գաղափարի եւ սկզբունքի 17 անցկացրել է խորհրդային բանտերում եւ կալանավայրերում, նաեւ իր պայքարի արդյունքում Հայաստանն անկախացել է, համենայնդեպս, իրեն այդպես է թվում, եւ այն անկախությունը, որին ինքը նվիրել է կյանքի մի մասը, ենթարկվել է հետապնդումների եւ կրել անասելի տառապանքներ, հիմա այդ անկախությունից օգտվում են այլ մարդիկ եւ այդ մարդիկ հետապնդում են իրեն՝ անկախության առաջամարտիկին, ստեղծում են այնպիսի պայմաններ, որ ինքը չկարողանա նույնիսկ սեփական տանն ապրել:

Իրականությունը, սակայն, այն է, որ Հայրիկյանը պայքարել է ոչ թե Հայաստանի անկախության, այլ խորհրդային՝ ռուսական գաղութատիրությունն ամերիկյան գաղութատիրությամբ փոխելու համար: Խորհրդային Միությունը չի լուծարվել քաղբանտարկյալների պայքարի արդյունքում, այն լուծարվել է ԱՄՆ-ի դեմ մղված սառը պատերազմում պարտվելու արդյունքում: Միացյալ Նահանգները խորհրդային քաղբանտարկյալներին, քաղհալածյալներին բարոյական եւ նյութական աջակցություն էին ցուցաբերում, Միացյալ Նահանգները նրանց ճանաչում էր խղճի կալանավորներ ու պատրաստ էր նրանց ապաստան տալ, եւ քաղբանտարկյալներից շատերն օգտվեցին այդ հնարավորությունից: ԽՍՀՄ-ից արտաքսվելուց հետո Հայրիկյանը եւս որոշ ժամանակ անցկացրեց Միացյալ Նահանգներում, բայց վերադարձավ Հայաստան՝ այստեղ քաղաքական գործունեություն ծավալելու համար: Միացյալ Նահանգները հենց այնպես, հանուն բարոյական կամ համամարդկային արժեքների չէին օգնում, խրախուսում կամ պաշտպանում խորհրդային քաղբանտարկյալներին: Նրանք այն միջոցներից մեկն էին, որով ԱՄՆ-ն պայքարում էր իր աշխարհաքաղաքական հակառակորդի դեմ եւ արդյունքում կարողացավ հաջողության հասնել, հաղթել Խորհրդային Միությանը եւ լուծարել այդ պետությունը: Ինչպես ցանկացած պատերազմում, այնպես էլ սառը պատերազմի արդյունքում պարտված Խորհրդային Միությունն անցավ Միացյալ Նահանգների տիրապետության տակ: Չնայած Հայաստանը եւ մյուս խորհրդային հանրապետությունները ֆորմալ առումով անկախացան, դարձան ՄԱԿ-ի անդամ, ունեցան սեփական դրամական միավորը եւ անկախության այլ ձեւական ատրիբուտներ, սակայն էության մեջ նրանք մնացին գաղութներ՝ խորհրդա-ռուսականը փոխարինվեց ամերիկյանով:

Քաղբանտարկյալները, ովքեր պայքարել էին հանուն Խորհրդային Միության փլուզման, որին ամերիկացիները չարի կայսրություն էին անվանում, իբրեւ թե իրենք էլ բարու մարմնացումն են, չհասան իշխանության, թեեւ ոչ բոլոր հանրապետություններից կային քաղբանտարկյալներ: Ինչո՞ւ Միացյալ Նահանգները թույլ չտվեց քաղբանտարկյալներին՝ գալ իշխանության, կամ նրանց չհանձնեցին կառավարչի պաշտոնը, չէ՞ որ նրանք արժանի էին դրան, թեկուզ այն պատճառով, որ իրենց կյանքն ու առողջությունն էին նվիրաբերել այդ պայքարին: Մի պարզ պատճառով. քաղբանտարկյալները կամ նրանց ճնշող մեծամասնությունը սկզբունքներ ունեցող եւ այդ սկզբունքներով ապրող մարդիկ էին, անսկզբունք մարդը չի կարող տարիներով մնալ կալանավայրում եւ չծախվել իշխանությանը: Բացի դա, քաղբանտարկյալները համարում էին, որ իրենք իրենց ներդրումն ունեն Խորհրդային Միության լուծարման գործում, եւ իրենց տեսակետի հետ պետք է հաշվի նստեն: Մինչդեռ նոր տերերին ոչ սկզբունքային, ոչ էլ փայատիրոջ ամբիցիաներ ունեցող մարդիկ պետք չէին:

Պարույր Հայրիկյանի ողբերգությունն այն է, որ ամերիկացիների հետ ձեռք-ձեռքի տված՝ պայքարել է Խորհրդային Միության լուծարման համար, թվում է, թե իրենք համատեղ ուժերով հասել են հաջողության՝ Հայաստանում հիմա առավել, քան երբեւէ, ամերիկյան դրածո կառավարություն է, բայց այդ հաղթանակի, հաջողության պտուղներից ինքն օգտվել չի կարող, ընդհակառակը՝ այդ պրոամերիկյան վարչախումբն իրենից տարեկան հսկայական գումար է պահանջում՝ իր տանն ապրելու իրավունքի համար:

Այստեղ արդարություն, իհարկե, գոյություն չունի, իսկ խրատն այն է, որ տերերը պարտավոր չեն հաշվի նստել իրենց ծառայողների՝ ծառաների շահերի հետ: Այն, ինչ նրանց համար արվել է կամ նրանց տրվել է, նրանք պետք է համարեն բավարար եւ իրենց իրավունք չվերապահեն՝ ավելին պահանջել:

Հասկանո՞ւմ է սա Պարույր Հայրիկյանը. թերեւս, որովհետեւ նրան ճանաչելով, համոզված եմ նրա իմաստնության մեջ: Ողբերգությունն այն է, որ նա դա հասկանալով, այլեւս ոչինչ չի կարող անել՝ այդ իրավիճակը փոխելու համար:

ՄՐՑԱՆԱԿԴ ԲԱՐՈՎ ՎԱՅԵԼԵՍ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Այս ապիկար եւ ողորմելի իշխանությունը պետք է հեռանա: Հեռանա՝ դեռ մեղմ է ասված, սրանք պետք է ռադ լինեն: Սրանք, որ այդպես էլ մատը մատին չտվեցին Բաքվի բանտերում պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ նախկին նախագահների՝ հայրենիք վերադարձի համար, ՀՀ դատարանի կողմից պետք է արժանանան այն նույն դատավճիռներին, որ Ադրբեջանի դատարանն է սահմանել Արցախի նախագահներ Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի, Արայիկ Հարությունյանի, ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի, ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի, ՊԲ հրամանատար Լեւոն Մնացականյանի եւ ՊԲ հրամանատարի տեղակալ Դավիթ Մանուկյանի նկատմամբ: Այո, ՀՀ ողորմելի իշխանությունները Հայաստանի ու Արցախի դեմ կատարել են այն նույն հանցագործությունները (գուցե՝ ավելի դաժան), ինչ Ադրբեջանի իշխանությունները: Ինձ համար որեւէ տարբերություն չկա՝ Ալիեւն է իր «դատարանով» վրեժխնդիր լինում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունից, թե՞ սրանք, որ 44-օրյա պատերազմից հետո այդպես էլ ոչինչ չարեցին իմ ազգի զավակներին տուն դարձնելու համար: Սրանք պետք է փտեն Երեւանի բանտերում, որը՝ 20 տարի, որը՝ ցմահ, որն էլ՝ ուղղակի պետք է գնդակահարվի պատի տակ:

Երեկ հրապարակվում էին Բաքվի դատարանի, այսպես կոչված, դատավճիռները՝ Բակո Սահակյանին, Արկադի Ղուկասյանին 20 տարվա ազատազրկման դատապարտելու մասին, իսկ ՀՀ իշխանությունները, ցավից ոռնալու փոխարեն, մայրաքաղաքը լցրել էին ոստիկաններով, որ ընդվզումի օջախներ առաջանալուն պես ճնշեն, ջարդեն ժողովրդին, բանտերը լցնեն նոր կալանավորներով, ավելի թանձրացնեն վախի ու սարսափի մթնոլորտը: Ընդվզում չեղավ, իհարկե, իրենք էլ էին մնացել զարմացած: Ոստիկաններն անգործությունից այս ու այն կրպակի մոտ սուրճ էին խմում ու բրդուճ ոչնչացնում: Վաստակել էին, երեւի… Եվ ոնց եմ ատում ես դրանց դատարկ հայացքները, որ ցավի անգամ մի փոքրիկ նշույլ էլ չեն արտահայտում՝ իմանալով հանդերձ, որ Բաքվում դատվում են մարդիկ, որոնց շնորհիվ է, որ իրենք այսօր դեռ բրդուճ են ուտում: Ժողովրդին կոտրել են, հավատից գցել, դարձրել ամորֆ խալխ… Ի՞նչ ընդվզման մասին է խոսքը: Վաղն ամբողջ Տավուշն էլ հանձնեն, Սյունիքն էլ, Սեւանն էլ՝ ձայն հանող չի լինելու: Ով պիտի ոտքի հաներ ժողովրդին՝ կամ բանտում է, կամ հազար տեսակ քրեական հոդվածներով հետապնդվում է: Բաքվի մահացու ձեռքն այս ապիկարների շնորհիվ ժողովրդին էլ է հասել:

Ալիեւից ինչո՞վ է պակաս ՀՀ նախագահ հորջորջվող Վահագն Խաչատուրյանը, որ, մարդկային խիղճն ու ազգային արժանապատվությունը գրպանը դրած, շնորհակալություն է հայտնում արյունարբու գազանին՝ իբր խաղաղություն հաստատելու համար: Ու ո՞նց չմեռար դու դրանից հետո, ո՞նց վերադարձար Հայաստան: Երանի Հայաստանը վարչապետ ունենար… գլուխդ պոկեր դրա համար, բայց վարչապետ էլ չունենք, չկա, չենք ստացել, վերջացել է: Վերջացել է 44-օրյա պատերազմից հետո… Նոյեմբերի 10-ին ռադ լիներ, վեց տարում երկիրը ոտքի կկանգներ, նոր բանակցողներ կգային, եւ Ալիեւը ստիպված կլիներ մի քանի անգամ մտածել Արցախը հայաթափելու իր հրեշավոր ծրագիրն իրականացնելուց առաջ: Կհամարձակվե՞ր նա գնալ այդ քայլին, եթե նրա դեմ կանգնած լիներ այլ բանակցող եւ ոչ այս պարտված, իր մաշկի ու աթոռի համար դողացող երեւույթը:

Մեծ է, արդյոք, տարբերությունը՝ Ալիեւին խաղաղության համար շնորհակալություն հայտնելու եւ նույն Ալիեւի հետ խաղաղության ու «մարդկային եղբայրության» մրցանակ կիսելու միջեւ: Իմ կարծիքով՝ դա նույն բանն է, ՀՀ նախագահն ու վարչապետն իրար արժեն: Թող փորձեր դիմադրել, թող պահանջեր, ասեր, որ այդ մրցանակը կընդունի գերիներին Բաքվի բանտերից ազատ արձակելուց հետո միայն: Չէ, պիտի վազ տար մրցանակն ստանալու, որ հանկարծ մեկնումեկն իր մեծ եղբորը չկշտամբեր Արցախի հայության հետ ոչ եղբայրաբար վարվելու համար: Ի՞նչ ասեմ, մրցանակդ բարով վայելես…

Երկու օր առաջ ՀՀ ՄԻՊ կոչվածը հայերիս հորդորում էր, որ «թուրք» բառը որպես վիրավորանք չօգտագործենք: Մեկդ սրան ասեք՝ աղջիկ ջան, ժամացույցդ հետ է ընկել, առաջ տուր… Քեզ այդ գործին նշանակողը վաղուց է հոգացել, որ «թուրք» բառը դառնա հարգանքի, խոնարհումի ու մեծարանքի խորհրդանիշ: Այսօր «հայ» բառն է վիրավորանքի, ստորաքարշության, դավաճանության, վախկոտության, անմռունչ բռնաբարվողի հոմանիշը, եւ դա՝ հենց այն մարդու շնորհիվ, որը քեզ այդ գործին է նշանակել:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՂԲՈՐ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՍԻՐԱՀԱՐ Է

ՏՈՒՆ

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում Երեւանի բնակիչ, 2001թ. ծնված, միջնակարգ կրթությամբ՝ «Բերի հաուս» ՓԲԸ գործադիր տնօրեն Յուրի Վաչիկի Քոքոբելյանի վերաբերյալ 4 դատավարություն կա: Նա Նիկոլ Փաշինյանի եղբոր՝ Արմեն Փաշինյանի գործընկեր Վաչիկ Քոքոբելյանի որդին է:

Նրան մեղադրանք է առաջադրվել, որ, զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, 2024 թ. մայիսի 6-ին, ժամը 01:00-ի սահմաններում Սեւան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 23-րդ կմ հատվածում վարել է տրանսպորտային միջոց, ինչը հայտնաբերվել է Գեղարքունիքի մարզի պարեկային ծառայողի կողմից: 2024թ. հունիսի 28-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատավոր Դավիթ Սարգսյանը վճռել է Յուրի Քոքոբելյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ պատիժ նշանակել տուգանք՝ իր ամսական եկամտի հնգապատիկի՝ 398 հազար 125 դրամի չափով:

Մյուս մեղադրանքն առաջադրվել է Յու. Քոքոբելյանին՝ 2024 թ. ապրիլի 24-ին, ժամը 12:50-ի սահմաններում Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի վարչական տարածքում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, իսկ 2024 թ. հունիսի 20-ին, ժամը 16:55-ի սահմաններում Իջեւան-Սեւան-Երեւան ավտոճանապարհի 136 կիլոմետրի հատվածում «Հյունդայի» մակնիշի ավտոմեքենա վարելու համար: Քանի որ նա զրկված է եղել մեքենա վարելու իրավունքից, դրա վերաբերյալ եւս կազմվել են արձանագրություններ, նրան մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: 2024թ. նոյեմբերի 21-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Գոռ Շահբազյանը Յուրի Քոքոբելյանի նկատմամբ պատիժ է նշանակել տուգանքի ձեւով՝ մի դրվագով ամսական եկամտի հնգապատիկի՝ 420 հազար 656 դրամի չափով, 2-րդ դրվագով՝ ամսական եկամտի հնգապատիկի՝ 430 հազար 281 դրամի չափով, ընդհանուր հաշվով՝ 850 հազար 937 ՀՀ դրամի չափով: Դրան գումարվել է նախորդ տուգանքը, եւ վերջնական պատիժ է նշանակել տուգանքի ձեւով՝ 1 միլիոն 50 հազար 562 դրամի չափով: Այդ գումարը վճարելու համար սահմանվել է 1 տարի ժամկետ:

Բայց Յուրի Քոքոբելյանը, հավանաբար, շատ է սիրում մեքենա վարել եւ մեկ տարվա ընթացքում, երբ զրկված է եղել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից՝ 2023 թ. հոկտեմբերի 24-ից մինչեւ 2024 թ. դեկտեմբերի 6-ը, եւ ծանուցված լինելով այդ մասին, շարունակել է մեքենա վարել ու բազմիցս պատժվել: Այսպես. նա 2024 թ. ապրիլի 13-ին, ժամը 01:00-ին Երեւանի Խորենացու փողոցում վարել է «Մերսեդես» մակնիշի 20 NN 202 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի վերաբերյալ պարեկային ծառայության պարեկի կողմից նույն օրը կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Ապա 2024 թ. մայիսի 4-ին, ժամը 21:45-ին Երեւանի Աճառյան փողոցում վարել է նույն ավտոմեքենան, որի վերաբերյալ նույնպես պարեկները կազմել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Հաջորդ անգամ նրան հայտնաբերել են 2024 թ. հունիսի 23-ին, ժամը 03:40-ին, Երեւան քաղաքի Բաղրամյան պողոտայում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան վարելիս, որի վերաբերյալ եւս կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Նորից Յու. Քոքոբելյանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Դատարանում մեղադրյալը եւ նրա պաշտպանը միջնորդել են կիրառել արագացված վարույթ: 2025թ. հուլիսի 25-ին Երեւանի առաջին ատյանի քրեական դատարանի դատավոր Արտակ Կարապետյանը վճռել է Յուրի Քոքոբելյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 դրվագով, վերագրվող արարքներից 1-ին դրվագով պատիժ նշանակել տուգանք՝ վերջինիս ամսական եկամտի հնգապատիկի՝ 420 հազար 656 դրամի չափով, 2-րդ դրվագով պատիժ նշանակել տուգանք՝ ամսական եկամտի հնգապատիկի՝ 425 հազար 250 դրամի չափով, 3-րդ դրվագով պատիժ նշանակել տուգանք՝ ամսական եկամտի հնգապատիկի՝ 438 հազար 156 դրամի չափով, եւ վերջնական պատիժ նշանակել տուգանք՝ 1 միլիոն 284 հազար 62 դրամի չափով:

Նույն դատավորի՝ Գոռ Շահբազյանի վարույթում է գտնվում Յու. Քոքոբելյանի վերաբերյալ եւս մեկ քրեական գործ: Քոքոբելյանը 2024 թ. նոյեմբերի 26-ին, ժամը 02.00-ի սահմաններում նույն մեքենան վարել է Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի վարչական տարածքում, նրան կանգնեցրել են տվյալ տարածքում ծառայություն իրականացնող պարեկները, կրկին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 344 հոդվածի 1-ին մասով: Այս քրեական գործով դատավարության 2026թ. հունվարի 19-ի նիստը չի կայացել՝ դատավարության մասնակիցների բացակայության պատճառով: Հաջորդ նիստը նշանակված է ապրիլի 7-ին:

Իսկ ո՞վ է այսքան իրավախախտումներ արած Յուրի Վաչիկի Քոքոբելյանը, եւ ինչո՞ւ են դատարաններն այդքան բարեհոգի նրա հանդեպ՝ բավարարվում են միայն տուգանք նշանակելով, չնայած նա համառորեն անտեսում է արգելքներն ու դատարանի որոշումները: Վանաձորը 17 տարի ղեկավարած Սամվել Դարբինյանն ու նրա եղբայրը՝ Սեյրան Դարբինյանը, Մարց գետի վրա եկամտաբեր՝ տարեկան ավելի քան 200 հազար դոլարի արտադրանք թողարկող փոքր հիդրոկայանը 2021թվականին ընդամենը 50 հազար դրամով վաճառեցին «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ, նախկին պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանի եղբորորդուն՝ Յուրի Քոքոբելյանին: Նույն օրը եւեթ այդ ընկերության տնօրեն է դարձել վարչապետ Նիկոլ Փաշինյանի եղբայրը՝ Արմեն Փաշինյանը, որը բնակվում էր Ռուսաստանում եւ Հայաստան է վերադարձել 2018-ի իշխանափոխությունից հետո:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴՅՈ՞Ք ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏ Է ՎԵՐՋՆԱԳԾԻՆ

Երեկվանից Արաբական Միացյալ Էմիրություններ մայրաքաղաք Աբու Դաբիում մեկնարկել են ռուս-ամերիկա-ուկրաինական եռակողմ բանակցությունները: Թեեւ դեռ շատ վաղ է արդյունքների մասին նույնիսկ մոտավոր կանխատեսումներ անելը, սակայն այն, որ բանակցություններ, այնուամենայնիվ, կան, շարունակվում են, չնայած նախորդ փուլի ձախողումներին, հույս է ներշնչում, որ ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության վերջնագիծը, այնուամենայնիվ, մոտենում է:

Ռուսական կողմից պատվիրակությունը ղեկավարում է ԳՇ բարձրաստիճան ներկայացուցիչ Իգոր Կոստյուկովը, ուկրաինական կողմից՝ Անվտանգության խորհրդի քարտուղար Ռուստեմ Ումերովը: Ամերիկյան կողմի ներկայացուցիչներն են հատուկ դեսպանորդ Սթիվեն Վիթքոֆն ու խորհրդական Ջարեդ Քուշները: Վերջիններս պատվիրակությունների հետ առանձին-առանձին հանդիպումներ են ունենում: Հետո արդեն լինելու են եռակողմ բանակցություններ, որին հաջորդելու են աշխատանքային խմբերի քննարկումները: Սա բանակցությունների երկրորդ փուլն է:

Հիշեցնենք, որ առաջին փուլը տեղի է ունեցել նորից Աբու Դաբիում՝ հունվարի 23-24-ին: Դեռ հունվարի վերջին միջազգային հեղինակավոր մի շարք պարբերականներ անդրադարձել էին բանակցային առաջին փուլին: Axios-ը գրել էր, որ քննարկվել էին բոլոր հարցերը, ապա ճաշել՝ գրեթե բարեկամներ: Financial Times-ն էլ հավելել էր, թե Վաշինգտոնն ակնարկել էր, որ Դոնբասը զիջելու դիմաց կարող է տրամադրել անվտանգային երաշխիքներ: Կրեմլից էլ հայտարարել էին, որ ոգեւորվել պետք չէ:

Այժմ արդեն Politico-ն է հայտնում, որ բանակցային այս փուլն ավելի խոստումնալից կարող է լինել: Բանակցային այս փուլին, հիշեցնենք, նախորդեց Թրամփի «էներգետիկ մորատորիումը», որը տեւեց մի քանի օր: Ռուսաստանը կարծես թե պահեց խոստումը: Ուկրաինան փորձեց հայտարարել, որ Ռուսաստանը խախտել է մորատորիումը, սակայն Թրամփն էլ հակադարձեց, թե Պուտինը խոստումը պահել է: Այս իրավիճակում, բանակցություններում հիմնական «գայթաքար» հանդիսացող գլխավոր հարցերից մեկը թերեւս մնում է տարածքների հարցը: Ամերիկյան վարչակազմում թերեւս պատկերացումն այդպիսին է: Եթե Կիեւն իր զորքերն ամբողջապես դուրս բերի Դոնբասից, ապա մյուս հարցերը զուտ տեխնիկական են: Թեեւ բոլոր կողմերն էլ ընդգծում են, որ օրակարգում բազմաթիվ հարցեր կան, որոնք պետք է դետալ առ դետալ համաձայնեցնել ու ամրագրել: Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Հարատեւ եւ ամուր խաղաղության դեպքում բոլոր հարցերը պետք է ոսկերչական ճշգրտությամբ հստակեցված լինեն: Ու մինչ բանակցությունները շարունակվում են, արդեն կան տեղեկություններ, որ Ուկրաինային թույլատրվելու է անդամակցել Եվրամիությանը, որին, ի դեպ, Ռուսաստանը կատեգորիկ դեմ չէ, թեեւ Եվրամիությունում չկա կոնսենսուս՝ Ուկրաինային իր շարքերն ընդունելու հարցում, եւ այդ կոնսենսուսը դեռ երկար ժամանակ չի լինի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղաքացուն խոշտանգած օրերը կնստի՞

Փետրվարի 4-ին դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում է հարուցվել Հայկ Հակոբյանի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասով՝ խոշտանգում: Հոդվածը սահմանում է. «Պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ... կամ գիտությամբ որեւէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ մեղադրվում է, ինչպես նաեւ այդ անձին վախեցնելու կամ որեւէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով... պատժվում է ազատազրկմամբ՝ 4-8 տարի ժամկետով»: Հիշեցնենք. 3 օր առաջ լրագրող Սյուզի Բաղոյանը տեսանյութ տարածեց, որտեղ քրեական ոստիկանության Երեւանի վարչության ծառայող Հայկ Հակոբյանը, հայհոյանքներ հնչեցնելով, հարվածներ է հասցնում հարցաքննվող քաղաքացուն:

ԼԵԶՈՒ

ԽՈՍՈՒՄ ԵՆՔ ՇԱՏ, ԲԱՅՑ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՆՔ ԽՈՍՈՒՄ

Գիտեմ՝ կգտնվեն մարդիկ, որ կասեն. «Երնեկ քո հավեսին՝ պետական կարեւորագույն գործընթացների, ընտրությունների շեմին էս ինչի՞ց ես խոսում, լեզուն երկրորդական է»: Ես կհակադարձեմ. «Ահա մի հարցազրույցից հատված, թե ինչպես են խոսում մեր արվեստագետները, եթե ձեր սիրտը չպայթի՝ հոդվածս կայրեմ»: Հեռուստաեթերից հնչում է. «Անթաթ (անընդհատ) ինձ կպնում են, հա՛, թե հայերեն ճիշտ չեմ խոսում… Ամեն մեկ, հա՛, թող իր գործով զբաղվի: Իմ խնդիրն է, հա՛, ոնց կխոսամ… Թող չլսեն, ես կոմպլեքսավորված անձնավորություն չեմ…»:

Այս խոսքերը շուկայում վարունգ վաճառող պատահական մարդու բերանից չեն հնչում: Սա հանրահայտ երգչուհի, շատերի կողմից ընդունված ու սիրված դերասանուհու խոսքից է: Հաղորդավարը փորձում է վերջին ճիգով հիշեցնել, որ եթերից անփույթ, անկանոն խոսելը բարեկիրթ չէ, որ դա արհամարհանք է թե՛ լեզվի, թե՛ հեռուստադիտողի նկատմամբ: Ի պատասխան հնչում են նույն բառակույտերը.

«Ես հայկական մենթալիտետով եմ շարժվում, ես ունեմ իմ ճիշտը, հա՛…»: Հարց է առաջանում. մի՞թե «հայկական մենթալիտետ» ասելով պետք է հասկանալ լեզվի աղավաղում, խոսքի մեջ չափուկշռի բացակայություն, դիմացինի նկատմամբ բացահայտ արհամարհանք: Երգչուհին մի՞թե չգիտի, որ «անթաթ» նշանակում է առանց թաթի, ինքը դա շփոթում է «անընդհատ»-ի հետ: Մի՞թե ակնկալվում է, որ նման խոսքից հետո կծափահարենք իրեն, կհիանանք ու մի պաչ կդրոշմենք համառ ու տգետ ճակատին:

Իսկ այդ օտարահունչ, շինծու «հա»-երը, որոնք բուն են դրել ոչ միայն այս երգչուհու, այլեւ շատերի բառապաշարում, եղե՞լ են երբեւէ մեր լեզվի մշակույթում: Դժվար թե: Դրանք աղմուկ են, իսկ աղմուկի մեջ միտքը չի ապրում: Շրջապատի կարծիքն անտեսելու, մարդկանց արհամարհելու, անսքող մեծամտության հոտ է գալիս նման խոսքից: Իսկ նման խոսքը ծնվում է մարդու մտածողությունից, կյանքի նկատմամբ վերաբերմունքից: Ոճը՝ ինքը մարդն է: Լեզուն վարքագիծ է: Ինչպես չի կարելի անճաշակ հագնվել պետական արարողության գնալիս, այնպես էլ չի կարելի անճաշակ խոսել հանրային միջավայրում: Խոսքը մեր ներքին կարգապահության, մեր ինքնահարգանքի արտահայտությունն է: Իսկ այդ «հա»-երը, «բա»-երը, «տատուս արեւ»-ները, «էտի, էսի, էնի»-ները երբեւէ եղե՞լ են մեր լեզվի մշակույթի մաս: Ո՛չ:

Ահա ինչու եմ համոզված, որ լեզուն երբեք երկրորդական չի եղել ու չի կարող լինել: Լեզուն պետականության, ինքնության, գոյի ողնաշարն է: Եթե այդ ողնաշարը ծուռ է կամ կոտրված, ոչ մի ընտրություն, ոչ մի ծրագիր, ոչ մի ճառ չի կարող ուղղել պետության «կեցվածքը»: Մենք կարող ենք ժամերով խոսել անվտանգությունից, ապագայից, բարեփոխումներից, բայց եթե այդ ամենը ձեւակերպում ենք աղավաղված, կիսատ, անորոշ, գռեհիկ լեզվով, ապա ոչինչ չենք ասում եւ ոչնչի չենք հասնում: Մի իմաստուն ասել է. «Եթե ինձ հարցնես՝ որն է կյանքում ամենաանպաշտպան բանն աշխարհում, ես կասեմ՝ մայրենի լեզուն»: Այո՛, մեր լեզուն այսօր անպաշտպան է, իսկ դա ինձ շատ է անհանգստացնում: Լեզուն շնչող, կենդանի էակ է: Եվ ինչպես ամեն կենդանի բան, նա կարող է ծաղկել, կարող է նաեւ անտեսվել, խեղվել՝ ամենօրյա անփութության ու արհամարհանքի մեջ: Այսօր հայոց լեզուն հենց այդ վիճակում է: Ոչ թե զարգանում է, այլ՝ քայքայվում: Ոչ թե հարստանում է, այլ՝ աղքատանում:

Եվ ամենացավալին այն է, որ դա տեղի է ունենում ոչ թե անգրագետ մարդկանց «շնորհիվ», այլ հաճախ՝ հանրությանը հայտնի, ճանաչված, «կարծիք ձեւավորող» անձանց խոսքի միջոցով: Մարդը խոսում է այնպես, ինչպես մտածում է: Մտածում է այնպես, ինչպես ապրում է:

Մայրենի լեզվի նկատմամբ արհամարհանքը մենք զգում ենք ամեն օր, ամեն քայլափոխի՝ ցուցանակներում, եթերում, սերիալներում, հարցազրույցներում, նույնիսկ՝ մասնագիտական խոսքում: Լեզուն դարձել է կա՛մ ցուցամոլության գործիք, կա՛մ կեղծ «ժողովրդականության» զոհ: Բայց ամենացավալին այն է, որ երբեմն լեզվի հանդեպ այդ արհամարհանքը ոչ թե անգիտակցական է, այլ՝ բացահայտ, ցուցադրական, լպիրշ ու ինքնավստահ:

Մի քանի «գոհար» ներկայացնեմ հարցազրույցներից. Քաղաքական/պաշտոնական խոսք. «Մենք ունենք տեսլական, որը հիմնված է ապագայի զարգացման կոնցեպտուալ մոտեցման վրա»: «Այս պահին ես չեմ կարող հստակ ասել, բայց գործընթացը ընթանում է»: «Մենք փորձում ենք մաքսիմալ օպտիմիզացնել ռեսուրսները»: «Պետք է ֆոկուս անենք թիրախային սեգմենտի վրա»: «Վերոնշյալ իրադարձությունը հանդիսանում է կարեւորագույն հանգրվան մեր հասարակության զարգացման համատեքստում»: Եթե քաղաքական գործչի լեզուն այսպես «խճողված» է, մյուսներից մեծ բան պահանջել չի կարելի, ուստի վաճառողն էլ ասում է. «Էս նոր մոդել ա, շատ տրենդի մեջ ա»:

Անտանելի չափերի են հասնում գռեհկաբանությունները սերիալներում, շոուներում. «Էդ ի՞նչ ես բզբզում, այ մարդ», «Դու լրիվ տուպոյ ես», «Գլուխդ չի կտրում», «Էդ ի՞նչ ես դեբիլություն անում»: Բժիշկն է խոսում. «Դե, նորմալ չի վիճակը, պիտի նայենք», «Մի քիչ խնդիր կա»: Իրավաբանը. «Ընդհանուր առմամբ, օրենքը թույլ է տալիս որոշակի քայլեր»: Իսկ որոշ «գրագետներ» ուղղակի սղոցում են. «Էդ հարցը պիտի ֆիքսենք», «Ինքը շատ ադեկվատ չի», «Դա իմ պերսոնալ օփինիոնն է», «Մի քիչ դիսքոմֆորտ կա»: Ամենածիծաղելին՝ երբ փորձում են «գրագետ երեւալ», ու ստացվում է այսպես. «Շնորհակալություն հայտնում ենք Ձեր կողմից ցուցաբերված ուշադրության համար» (երբ կարելի է ասել՝ շնորհակալ ենք ուշադրության համար), «Ունենք որոշակի խնդիրների առկայություն» (այսինքն՝ խնդիր ունենք, բայց ամաչում ենք ասել): Սրանք մտքի աղքատության, խոսքի անորոշության մասին են խոսում, որը երբեմն նաեւ ծառայում է որպես պաշտպանիչ վահան:

Բայց բանավոր խոսքին զուգահեռ կան նաեւ գրավոր խոսքի ցնցող նմուշներ, օրինակ՝ ցուցանակներ: Մեր փողոցներում հայերենն առաջին հերթին խայտառակվում է հենց ցուցանակներում: Մի ժամանակ ռուսերեն էին, հիմա՝ անգլերեն: Luxury Store, Concept Shop, Beauty Zone: Եվ ամենախայտառակն այն է, որ հաճախ սխալ անգլերենով:

Շատ դեպքեր կան՝ հայերենն ուղղակի բացակայում է: Լեզվի մասին օրենքն է խախտվում: Կարծես ամաչում են հայերեն ցուցափեղկից, կարծես հայերենը չի «վաճառում, չի գրավում, մոդայիկ չի, չի օգնում բիզնեսին»: Մարդը խոսում է այնպես, ինչպես մտածում է: Մտածում է այնպես, ինչպես ապրում է: Պատահական չէ հին, բայց անխոցելի ճշմարտությունը. ոճը՝ ինքը մարդն է: Ինչպիսին ոճն է, այնպիսին էլ մարդն է:

Հայոց լեզուն պարզապես հաղորդակցության միջոց չէ: Դա մեր մտածողության տունն է: Եվ եթե այդ տան պատերը շարունակենք այսպես ճաքեցնել, մի օր կարթնանանք ու կհասկանանք՝ խոսում ենք շատ, բարձր, ազատ… բայց մեր Սուրբ լեզվով չենք խոսում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՆՁՆՎԵԼ ԵՆ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔԻ, ՆՐԱՆՔ ԱՊԱՀՈՎ ՁԵՌՔԵՐՈՒՄ ԵՆ

2023 թվականին երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած Աննա Արեւշատյանի գործով դատավարության ինֆորմացիան «Դատալեքսում» փակ է: Այն ժամանակ այդ պատմությունը մեծ աղմուկ հանեց: Հիշեցնենք, որ դստերը հոգեկան եւ ֆիզիկական տառապանքներ պատճառած Աննա Արեւշատյանը, որ 5 երեխայի մայր է եւ հանցավոր անցյալ է ունեցել, համացանցում ահասարսուռ տեսանյութի տարածումից հետո կալանավորվեց եւ, ըստ մամուլում հրապարակումների, դատապարտվել է երկար տարիների ազատազրկման: Դատապարտված է նաեւ ընտանիքի հայրը: Երկու կենսաբանական ծնողն էլ զրկված են ծնողական իրավունքներից՝ իրենց երեխաների նկատմամբ անթույլատրելի բռնություններ գործադրելու համար:

Մենք փորձեցինք ճշտել, թե ինչպես են այժմ հինգ երեխաները, որտեղ են գտնվում, ում խնամքի տակ են: Տեղեկացանք, որ դեպքից անմիջապես հետո երեխաներին տեղափոխել են ՀՕՖ՝ երեխաների պաշտպանության «Մարդիգյան» կենտրոն: Իսկ 2025 թվականի դեկտեմբերից, ծնողների՝ ծնողական իրավունքից զրկվելուց հետո, երեխաներն արդեն Արտաշատ խոշորացված համայնքի Դիմիտրով գյուղում են՝ խնամատար ընտանիքում: 5 երեխաների խնամքով զբաղվող ընտանիքը եւս 2 դուստր ունի:

Դիմիտրովի վարչական ղեկավար **Ահարոն Հակոբյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ անձամբ է այցելել ընտանիք եւ իմացել երեխաների որպիսության մասին. «Այցիս ժամանակ երեխաները դպրոցում էին, միայն 3 տարեկան Մարկն էր տանը՝ իր խնամակալ մայրիկի հետ: Հայրն աշխատանքի էր: Այդ ընտանիքը երկար ժամանակ ապրում էր Ռուսաստանում, մոտ 5 կամ 6 տարի առաջ են վերադարձել համայնք: Խոսեցի նաեւ դպրոցի տնօրենի հետ, ասաց, որ երեխաները պարտաճանաչ հաճախում են դպրոց, մեծ աղջիկն 9-րդ դասարանում է սովորում, ամեն ձեւով դպրոցում աջակցում են երեխաներին»:

Կապ հաստատեցինք նաեւ Արարատի մարզպետարանի սոցիալական բաժնի աշխատակիցների հետ՝ իմանալու, թե արդյոք այցելո՞ւմ են երեխաներին, հետեւո՞ւմ են նրանց կենսապայմաններին: «Մենք 24 ժամ կապի մեջ ենք խնամատար ծնողի հետ, ցանկացած պահի, եթե ցանկացած հարց լինի, այցելությունները մի կողմ դրած, ամեն րոպե իրավունք ունի ծնողը զանգի մեզ, լինի դա աշխատանքային կամ ոչ աշխատանքային ժամերի: Իհարկե, ամեն բանից տեղեկացված ենք, երեխաները դպրոց հաճախում են: Սկզբում այնքան էլ երեխաների վիճակը հոգեբանորեն լավ չէր, բայց հիմա արդեն ամեն բան լավ է, երեխաները հարմարվել են այդ ընտանիքին: Ընտանիքն ունի 2 աղջիկ, հայրը եւ մայրը աշխատում են եւ հոգում երեխաների կարիքները»: Պետությունը նաեւ ընտանիքի խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի համար որոշակի գումար է վճարում խնամատար ծնողներին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՂԱՂԱՐԱ՞Ր, ԹԵ՞Ր ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ՀՐԱՎՐՈՂ. ԹՐԱՄՓԻԶՄԻ ՆՐԲԵՐԱՆԳՆԵՐԸ

Քաղաքական ու փորձագիտական շրջանակները, համաշխարհային գործիչներն ու մասմեդիան շարունակում են «գլուխ կոտրել» այն դիսկուրսի վրա, թե իրականում ով է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը՝ խաղաղարար առաջնորդ, որը մշտապես պարծենում է մի քանի պատերազմ, այդ թվում՝ հայ-ադրբեջանական երկարամյա հակամարտությանը վերջ դնելու իր հերոսությամբ, շարունակում ջանքերը՝ ռուս-ուկրաինական պատերազմը կանգնեցնելու ուղղությամբ, թե՞ պատերազմներ հրահրող մեկը՝ հաշվի առնելով նրա նոր պաշտոնավարման շրջանում մի քանի երկրի նկատմամբ սպառնալից քաղաքականությունը, Կանադան ու Գրենլանդիան ԱՄՆ-ին բռնակցելու ծրագրերը, Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոյին առեւանգելն ու ԱՄՆ-ում կալանավորելը, համանման սցենարը Կոլումբիայի, Բոլիվիայի, Մեքսիկայի դեպքում չբացառելը, Կուբայի վախճանի մասին հայտարարելը, Իրանի վրա հարձակվելու ծրագրերը եւ այլն, եւ այլն: Հիշում եք՝ անցյալ ամիս նա հրապարակավ դժգոհություն արտահայտեց, եթե ոչ՝ նեղացած «մուննաթ եկավ» իրեն Նոբելյան խաղաղության մրցանակ չշնորհելու համար: Իսկ նա բազմիցս է պնդել, թե արժանի է այդ պարգեւին՝ իր խաղաղարար ջանքերի ու նախաձեռնությունների համար, եւ այդ հարցում, ի դեպ, նրան սատարեցին Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը: Թրամփն արժանին մատուցեց երկուսին՝ երախտագիտություն հայտնելուց զատ, պաշտոնապես երկուսին էլ հրավիրեց իր նախաձեռնությամբ ստեղծված՝ Գազայի հարցով խաղաղության խորհուրդ, որին շատերն արդեն անվանում են ՄԱԿ-ի այլընտրանք:

Նորվեգիայի հետ կապված, ինչպես նշեցինք, Թրամփը նամակ գրեց այդ երկրի վարչապետին, թե այլեւս չի զգում «պարտավորություն՝ մտածել բացառապես խաղաղության մասին»՝ այն բանից հետո, երբ Նորվեգիան «որոշեց չշնորհել» իրեն Խաղաղության նոբելյան մրցանակը: Բացի այդ, նա կասկածի տակ է դրել Դանիայի իրավունքը Գրենլանդիայի նկատմամբ. «ՆԱՏՕ-ն 20 տարի շարունակ Դանիային ասում է. «Դուք պետք է վերացնեք Գրենլանդիայում ռուսական սպառնալիքը»: Դժբախտաբար, Դանիան ոչինչ չի կարողացել անել՝ դրա հետ կապված: Հիմա ժամանակն է, եւ դա կարվի»: Վարչապետ Յոնաս Գահր Ստյորեն հաստատել է, որ ստացել է նամակը՝ նշելով, որ այն պատասխանն էր ԱՄՆ նախագահին՝ իր եւ Ֆինլանդիայի նախագահի անունից ուղարկված կարճ հաղորդագրությանը: Միաժամանակ, նա շեշտել է, թե Խաղաղության նոբելյան մրցանակը շնորհում է ոչ թե պետությունը, կառավարությունը, այլ՝ Նոբելյան կոմիտեն: Ինչ վերաբերում է Գրենլանդիային, Թրամփը պնդում է, որ կղզին կարեւոր նշանակություն ունի ԱՄՆ անվտանգության համար, եւ Վաշինգտոնը կստանա այդ տարածքը: Գրենլանդիայի հարցում Դանիային սատարելու համար Թրամփը սպառնաց բարձրացնել մաքսատուրքերը եվրոպական մի շարք երկրների, այդ թվում՝ մերձավոր դաշնակից Մեծ Բրիտանիայի համար: Եվրոպացի առաջնորդներն իրենց հերթին նշում են, որ ԱՄՆ-ն անցել է սահմանը՝ մաքսատուրքերը բարձրացնելու իր սպառնալիքներով: Մեծ Բրիտանիան արտահայտել է իր դեմ լինելը Թրամփի ծրագրերին, իսկ ԵՄ-ն սպառնում է դրանց պատասխանել տնտեսական միջոցառումներով: Խոսվում է նաեւ, որ ԵՄ անդամ երկրների առաջնորդները փակ չաթ են ստեղծել, որտեղ հաճախակի քննարկում են Թրամփին հակազդելու միջոցառումները: Հատկանշական է, որ ԱՄՆ նախագահը հետ է կանչել Կանադայի վարչապետ Մարկ Քարնիին ուղարկված հրավերը՝ մասնակցելու իր կողմից կազմված Խաղաղության խորհրդին. «Թող այս նամակը տեղեկացնի, որ Խաղաղության խորհուրդը հետ է կանչում իր հրավերը Ձեզ՝ կապված Կանադայի մասնակցության հետ. դա կլինի ամենահեղինակավոր Առաջնորդների խորհուրդը, որ երբեւէ հավաքվել է»: Կանադան ավելի վաղ հայտնել էր, որ չի վճարի խորհրդում լինելու համար, բայց կմիանա դրան: Ի սկզբանե Խաղաղության խորհուրդը պետք է զբաղվեր Գազայի հատվածում հակամարտությունից հետո անկլավի կառավարմամբ, ռազմական հակամարտության հետեւանքների վերացմամբ, սակայն ԱՄՆ-ն ցանկանում է, որ խորհուրդն օգնի նաեւ աշխարհի այլ հակամարտությունների լուծմանը: Խորհրդի անդամներն ընտրվում են երեք տարի ժամկետով, իսկ այն անդամները, որոնք կանոնադրության՝ ուժի մեջ մտնելուց հետո առաջին տարվա ընթացքում Խաղաղության խորհրդին կհատկացնեն ավելի քան 1 միլիարդ ԱՄՆ դոլար, կունենան մշտական անդամակցության իրավունք: Սակայն խորհրդին անդամակցության պրոցեսն այնքան հարթ ու արագ չի ընթանում, որքան թվում է Թրամփին, նույնիսկ Ռուսաստանը ժամանակ է վերցրել՝ իր անդամակցության հարցի շուրջ մտորելու համար: Պատերազմի եւ խաղաղության հարահոսում ակնհայտ է նաեւ, որ Թրամփի համար այս նախաձեռնությունը կոնկրետ կապիտալ է, ԱՄՆ-ի համար՝ հավելյալ առեւտրի ու եկամտի աղբյուր, կարճ ասած՝ նյութական արժեք, իսկ գուցե՝ առաջին հերթին հենց այդպիսին:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 6.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՍԵՎ ԱՐԿՂԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՐՁԵԼՈՒ ԵՆՔ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՄՔԵՐԻՆ

Հայաստանի մշակութային հիմնադրամի տնօրեն **Մանուկ Նիգոյանը** հեղինակային փոթքաստ է սկսել, որը կոչվում է «Սեւ արկղ»: «Սեւ արկղ»-ի առաջին հյուրը ՀԱԿ-ի վարչապետի թեկնածու Լեւոն Զուրաբյանն էր, իսկ հաջորդ հյուրը լինելու է «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանը: «Սեւ արկղ» նախագծի մտահղացման մասին զրուցել ենք Մանուկ Նիգոյանի հետ:

- Մանուկ, երկար ժամանակ ակտիվ չէիք, հիմա սկսել եք փոթքաստ վարել, ինչպե՞ս ծագեց քաղաքական փոթքաստի միտքը:

- Հաշվի առնելով նախընտրական պրոցեսները եւ հաշվի առնելով, թե հայաստանյան ներքին քաղաքական կյանքը հայ ժողովրդին որքան բազմազան ու բազմաբովանդակ նախընտրական քարոզարշավ է խոստանում, ես կարծեցի, որ կա անհրաժեշտություն՝ եւս մեկ պլատֆորմ ստեղծելու, որտեղ սեւ արկղի տրամաբանությամբ կփորձենք ժողովրդի եւ տարբեր քաղաքական գործիչների հետ վերհիշել նախկինում արված բազմաթիվ հայտարարություններ, հարցազրույցներ եւ քաղաքական գործելաոճեր՝ տարբեր իրավիճակներում: Կփորձենք պարզաբանել, թե որ միտքն ինչի համար է եղել, եւ ինչ փոփոխություններ են տեղի ունեցել: Ինչպես նաեւ կփորձենք հասկանալ, թե այն մարդիկ, ովքեր հավակնում են դառնալ Հայաստանի վարչապետ, ինչ փոփոխություններ են խոստանում հայ ժողովրդին, որի մոտիվացիայով դրդված էլ՝ ժողովուրդը պետք է ազատվի Նիկոլ Փաշինյանի իշխանությունից եւ այլ իշխանություն ընտրի:

- Այսինքն՝ ինչպես սեւ արկղերն են բացահայտում իրականությունը, այնպես էլ Դուք՝ սեւ արկղերի պես բացահայտելու եք ճշմարտությունը.... ճի՞շտ եմ հասկանում:

- Այո, բայց ոչ թե մարդկանց վատ դրության մեջ դնելու համար է լինելու, այլ որպեսզի մարդկանց տանք պարզաբանելու հնարավորություն, որպեսզի ասեն, թե ինչու էին ժամանակին այս կամ այն հայտարարությունն անում եւ ինչու են հիմա այդ հայտարարություններին հակառակ գործընթացներ գեներացնում եւ այլն:

- Կամ այնպիսի քաղաքական գործիչ, որին առաջիկայում կցանկանաք նման դրության մեջ դնել՝ հիշեցնել իր նախորդ ասածները:

- Դրության մեջ դնելն ասոցացվում է նեղության մեջ դնելու հետ, բայց մենք բարի նոտայի վրա ենք ցանկանում վերլուծություններ անել եւ, ընդհանրապես, հավակնում ենք վարչապետի բոլոր թեկնածուներին ներգրավել, եթե իրենք դեմ չլինեն եւ ընդունեն մեր հրավերը, ինչու ոչ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւս ցանկանում ենք հրավիրել:

- Այսինքն՝ սահմանափակում չունե՞ք հյուրերի հարցում:

- Բացարձակապես ոչ մի սահմանափակում: Որեւէ ուժի կամ անձի կողմից այս պրոյեկտը չի ֆինանսավորվում, բացառապես մեր անձնական ֆինանսական ներդրումով է այն իրականացվում, չհաշված այն դեպքերը, երբ քաղաքացիները կարող են բաժանորդագրությամբ վճարել եւ աջակցել պրոյեկտի շարունակականությանը: Մենք որեւէ կաշկանդվածություն չունենք որեւէ ուժի նկատմամբ եւ որեւէ մեկի նկատմամբ չունենք ոգեւորություն եւ մոտիվացիա: Մեզ համար բոլորը հավասար քաղաքական ուժեր են, եւ բոլորի հետ հավասարապես պետք է շփվենք:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am